

# ԲԱՆԱԽՈՍ


1999 04 28

ԹԻՎ 26

1999 04 15

## ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԱՎԵԼ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ  
ՀՀ սեփականաշնորհման նախարար



Հանրապետությունում ընթացող տնտեսական բարեփոխումների առանցքային մասն է պետական սեփականության մասնավորեցումը: Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն էր, որ անկախության հռչակագրից հետո, դեռևս 1991 թվականի փետրվարին, ընդունեց «ՀՀ-ում սեփականաշնորհման հիմունքները» Գերագույն խորհրդի որոշումը: Այդ որոշման մեջ նշվեց, որ Հայաստանում շուկայական հարաբերություններին անցումը պետք է իրականացվի պետական սեփականության մասնավորեցման միջոցով:

Հայաստանը նաև առաջինն էր նախկին ԽՍՀՄ հանրապետություններից, որը հողի սեփականաշնորհմամբ սկսեց տնտեսական բարեփոխումների գործընթացը: Պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացի անհրաժեշտությունը մեր հանրապետությունում առավել սրություն ստացավ հողի սեփականաշնորհումից և 1992 թվականին գների ազատականացումից հետո: Ըստ էության, տնտեսության մի խոշոր հատվածում՝ գյուղատնտեսությունում, ստեղծված արտադրա-տնտեսական հարաբերություններն իրենց բնույթով չէին համապատասխանում մյուս ոլորտներում, և ամենից առաջ, գյուղատնտեսական հումք մթերող ու վերամշակող ճյուղերում տիրող հարաբերություններին, ինչն անկասկած, նվազեցնում էր ագրոարդյունաբերական համալիրի տնտեսական արդյունավետությունը և սպառողական շուկայի հագեցումը պարենային ապրանքներով: Իսկ արտադրամիջոցների գրեթե համընդհանուր պետական սեփականության պայմաններում գների բացթողումը կամ ազատականացումը ձևավորեց մենաշնորհային բարձր գների մի այնպիսի համակարգ, որի նույնիսկ փոքր չափերով իջեցմանը կարելի էր հասնել ոչ պետական սեփականության հատվա-

ծի ձևավորմամբ և մրցակցության ապահովման ճանապարհով:

Մասնավորեցման երկրորդ ոլորտը սպասարկումների և վճարովի ծառայությունների օբյեկտների մասնավորեցումն էր: Այս ոլորտում բարենպաստ հող էր ստեղծվել մասնավորեցման համար, ինչը պայմանավորված էր ձեռնարկությունների փոքր չափերով, թեև ոչ իրավաբանորեն ձևակերպված, սակայն փաստացի սեփականատերերի առկայությամբ: Հայերի ձեռնարկատիրական բարձր ակտիվությունը նույնպես տնտեսության զարգացման յուրահատուկ կողմերից մեկն է և իր ազդեցությունն ունեցավ հատկապես առևտրի և սպասարկումների ոլորտի մասնավորեցման ժամանակ:

Դեռևս 1991 թվականի մարտին ընդունվեց առևտրի, հասարակական սննդի, վճարովի ծառայությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման մասին ՀՀ կառավարության որոշումը և 1991-1992 թվականներին սեփականաշնորհվեց այդ ոլորտների 335 օբյեկտ, սակայն այն վճռական դեր չխաղաց ոչ պետական ոլորտի անհրաժեշտ զանգվածի ստեղծման, գների նվազեցման և շուկայի աշխուժացման գործում:

1995-1997 թվականներին առավել արագ ընթացավ «փոքր» օբյեկտների՝ հիմնականում առևտրի և սպասարկումների ոլորտի մասնավորեցումը:

Մասնավորեցման գործընթացի երրորդ ոլորտը պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշ-

*«Հայերի ձեռնարկատիրական բարձր ակտիվությունը նույնպես տնտեսության զարգացման յուրահատուկ կողմերից մեկն է:»*



նորիս մեջ էր: Սա ոչ միայն կարևոր և խոշոր սոցիալական նշանակություն ունեցող միջոցառում էր, այլև այն մեծապես նպաստեց անշարժ գույքի շուկայի ձևավորմանը:

Տնտեսության մասնավորեցման հաջորդ կարևոր ուղորտը տնտեսության տարբեր ճյուղերի ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումն է: Սա, թերևս, մասնավորեցման ամենաբարդ և պատասխանատու փուլն է, որն իրականացման ձևերով և մեթոդներով զգալիորեն տարբերվում է ԱՊՀ-ի և Արևելյան Եվրոպայի երկրների համանման գործընթացներից:

Արտադրության միջոցների զանգվածային սեփականաշնորհումը ոչ միայն խորքային և համընդհանուր սոցիալ-քաղաքական միջոցառում է, այլև տնտեսության հետագա ռազմավար կառուցվածքի ձևավորման, տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացման, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոց:

Մեզ մոտ մասնավորեցումը դիտվում է ոչ թե որպես սեփականության ձևի մեխանիկական փոփոխություն, այլ ամենից առաջ, տնտեսավարող սուբյեկտների վարչական պատասխանատվությունից տնտեսական պատասխանատվության անցման գործընթաց: Ենթադրյալով, որ անցման գլխավոր նպատակն է ազատ ձեռներեցներին ոչ միայն հնարավորություն ընձեռնել ընթացիկ տնտեսական խնդիրները շուկայի օրենքների շրջանակներում լուծելու, այլև իրենց գործելակերպը և ռազմավարությունը որոշելու, ինքնուրույն վարելու կուտակման և սպառման քաղաքականությունը, արտադրանքի (ծառայությունների) իրացման շուկաները և զմերը որոշելու, գիտատեխնիկական առաջադիմության նվաճումները ներդնելու, արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու:

Իրական մասնավորեցման ճանապարհին հանրապետությունում արդեն արվել են զգալի աշխատանքներ, մասնավորապես պետական ձեռնարկությունների և «փոքր» օբյեկտների սեփականաշնորհման ուղղությամբ: Առկա են զգալի ձեռքբերումներ, ակնհայտ են նաև որոշակի բացթողումներ: Քանակական ցուցանիշների առումով 1999 թվականի ապրիլի 1-ի դրությամբ սեփականաշնորհվել են տնտեսության տարբեր ճյուղերի 1476 ընկերություններ, որից 1095-ը՝ բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ, 130-ը՝ աշխատավորական կոլեկտիվներին, 180-ը՝ պետական գույքի վարձակալներին, 17-ը՝ աճուրդով և 54-ը՝ մրցույթով:

Սեփականաշնորհվել է նաև 6694 «փոքր» օբյեկտ:

Պետք է նշել, որ մասնավորեցման ցանկացած ծրագրի դրական ազդեցությունը ձեռք է բերվում միայն ֆինանսական կայունացման, գների ազատականացման, ֆինանսական շուկաների զարգացման և ակտիվ հակամեծաշնորհային քաղաքականության իրականացման, ապրանքների ու կապիտալների ներմուծման և արտահանման համար տնտեսությունը բացելու միջոցառումների համալիրում: Սեփականաշնորհումն անցումային տնտեսության պայմաններում չի բերում կենսունակ ձեռնարկությունների մեխանիկական երևան գալուն, այլ ստեղծում է դրա համար անհրաժեշտ տնտեսա-իրավական նախադրյալներ:


Չանգվածային սեփականաշնորհումն անխուսափելի նախադրյալ է «անցումային» տնտեսական միջավայրը շուկայականի ձևափոխելու գործում: Ըստ որում, հանրապետությունում (մասնավորապես, սեփականաշնորհման առաջին փուլում) որդեգրվեց մասնավորեցման այն քաղաքականությունը, որը կողմնորոշված էր սոցիալական փոխզիջումների (ներառյալ սեփականաշնորհման սերտիֆիկատների կիրառումն, աշխատավորական կոլեկտիվներին տրվող արտոնությունները, ձեռքբերված գույքի դիմաց տարածամեծ վճարումները և այլն):

Ներկայումս, ելնելով մի շարք հայտանիշներից, կարելի է խոսել սեփականատիրական հարաբերությունների բնագավառում համակարգային ձևափոխումների քանակական կողմի մասին, որը բնորոշ է միջինժամկետ (երկրորդ) փուլին: Այն սկսվել է 1997թ. սկզբից՝ սկսվելով սեփականաշնորհման առաջին փուլի ընթացքում ձեռքբերված սեփականության իրավունքի վերաբաշխման գործընթացներով: Չատկապես այդ փուլի համար կարևոր նշանակություն ունի պետական քաղաքականությունը, որը բարենպաստ պայմաններ պետք է ստեղծի սեփականության իրավունքի վերաբաշխման համար:

Մասնավորեցման անցած առաջին փուլի առավել դրական արդյունքն այն է, որ սկսվել է սեփականության իրավունքի փուլային անցման գործընթացը: Միայն դրանից հետո, ինչպես նաև կապիտալի շուկայի և սեփականության իրավունքի համակարգի գործնական ձևավորմանը զուգընթաց, կարելի է խոսել հանրապետությունում զանգվածային սեփականաշնորհման դրական արդյունքների մասին:

Տնտեսական բարեփոխումներ իրականացնելու ժամանակ պետության դերը պետք է սահմանափակվի անհ-

*«Մեզ մոտ մասնավորեցումը դիտվում է ոչ թե որպես սեփականության ձևի մեխանիկական փոփոխություն, այլ ամենից առաջ, տնտեսավարող սուբյեկտների վարչական պատասխանատվությունից տնտեսական պատասխանատվության անցման գործընթաց:»*



*Պավել Ղալթախյանը ծնվել է 1950թ. հունվարի 8-ին, Բաքվում, ծառայողի ընտանիքում: Նույն թվականին ընտանիքը տեղափոխվել է Երևան:*

*Սկզբնական կրթությունը ստացել է Երևանի թիվ 178 միջնակարգ դպրոցում: 1967թ. ընդունվել է Երևանի պետական համալսարան, որն ավարտել է 1972թ., ստանալով տնտեսագետի որակավորում:*

*Աշխատանքային գործունեությունը սկսել է 1972թ. Արմվյանի «Չափիչ» գործարանում որպես ինժեներ-տնտեսագետ և ավագ ինժեներ-ծրագրավորող:*

*1975թ. մայիսից մինչև հունիս աշխատել է Արմվյանի «Կոտայք» միավորումում որպես ավագ տնտեսագետ: 1975-85թթ. աշխատել է Երևանի էլեկտրոապարատների գործարանում որպես ավագ տնտեսագետ և գլխավոր հաշվապահ: 1985-91թթ. աշխատել է Նախարարների խորհրդի գործերի կառավարչությունում որպես տնտեսական վարչության գլխավոր հաշվապահ, հաշվապահական հաշվառման և հաշվապահության բաժնի վարիչ: 1991թ. նշանակվել է ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր պետական ունեցվածքի տնօրինման և ապապետականացման կոմիտեի նախագահի տեղակալ, առաջին տեղակալ, նախագահի պաշտոնակատար, այնուհետև՝ ՀՀ պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության պետ: 1997թ. հոկտեմբերին նշանակվել է ՀՀ սեփականաշնորհման նախարար:*

*Ամուսնացած է, ունի երեք երեխա:*



րաժեշտ իրավական միջավայրի ստեղծմամբ, որի հիման վրա կիրականացվի պետական անուղղակի (փափուկ) կարգավորում և կոշտ պետական իրավական վերահսկողություն: Անկասկած, պետության կարևորագույն խնդիրը կմնա մասնավոր սեփականատիրական հարաբերությունների զարգացման հետ կապված անխուսափելի սոցիալ-տնտեսական անհամամասնությունների և հակասությունների հարթումը: Վերջին հաշվով միայն այդ գործընթացների համախմբումը կարող է բերել հանրապետությունում իրական կայուն և լիարժեք սեփականատիրական նոր հարաբերությունների համակարգի ձևավորմանը:

Այսպիսով, պետական գույքի մասնավորեցման գործընթացը բազմաբնույթ միջոցառում է, որի հիմնական նպատակներից կարելի է առանձնացնել. արտադրական, աշխատանքային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործուն համակարգի ստեղծումը, մրցակցության զարգացումը, շուկայական հարաբերությունների զարգացման դաշտի ընդլայնումը, ձեռնարկատիրական ակտիվության բարձրացումը, սեփականատերերի խափի ստեղծումը:

Եթե խմբավորենք և ավելի խոշորացնենք մասնավորեցման նպատակները, ապա կարելի է խոսել հետևյալ խոշորացված նպատակների մասին. ա) կրճատել կառավարության ուղղակի ներգործությունը տնտեսության վրա և, հետևաբար, նրա գործունեության վարչական դաշտը հասցնել նվազագույնի, բ) կրճատել կառավարության այն ծախսերը, որոնք կատարվում են տարբեր տեսակի սուբսիդիաների և կապիտալ ներդրումների միջոցով, գ) խթանել մրցակցությունը և բարձրացնել ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը:

Բացի խոշորացված նպատակներից կան նաև լրացուցիչ նպատակներ, որոնք պետք է հաշվի առնել որոշակի դեպքերի համար: Այդպիսի լրացուցիչ նպատակներ կարող են լինել՝ ա) պետականի փոխարեն բաժնետիրական սեփականատիրության ընդլայնումը և խրախուսումը, բ) կապիտալի շուկայի ձևավորումը և ընդլայնումը, դրա իրագործման համար ապահովելով համապատասխան ենթակառուցվածքներ, գ) պետական բյուրոկրատիայի նվազեցումը, հատկապես ձեռնարկատիրական գործունեության կառավարման բնագավառում, դ) գործող արտադրական կապիտալից պետական բյուջե մուտք արվող եկամուտների ավելացումը, ինչպես դրանց վաճառքի, այնպես էլ աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղիներով:

Մասնավորեցման ծրագրերում առաջադրված նպատակներին հասնելու համար դրվում են դրանց համապատասխան խնդիրներ, որոնց լուծման միջոցով նպատակները իրագործվում են: Որպես կանոն, նպատակը դրվում է որոշակի ժամանակահատվածում բազմաթիվ խնդիրների լուծման ճանապարհով արդյունքի հասնելու համար: Եվ շատ հնարավոր է, որ որևէ երկրի մասնավորեցման ծրագրում, որը կարող է իրականացվել մի քանի տարվա ընթացքում, դրված լինի նույն մեկ կամ մի քանի նպատակները: Շատ կարևոր է իրատեսական նպատակների առաջադրումը և դրանց հասնելու խնդիրների հստակ սահմանումը: Այսպես, եթե սահմանվում են մասնավորեցման այնպիսի նպատակներ, որոնք չեն բխում տվյալ երկրի իրական հնարավորություններից և դրանց իրականացումը կարող է անչափ երկար ձգձգվել, դրանով իսկ կասկածի տակ է դրվում ամբողջ մասնավորեցման գործընթացի իրականացումը:

Ելնելով թվարկված նպատակներից, կարելի է նշել նաև այն «ստանդարտ» խնդիրները, որոնք կարող են տեղ գտնել մասնավորեցման ծրագրերում և օրենքներում: Դրանք են. գլխավոր խնդիրներ. տնտեսական գործունեության վրա պետության ուղղակի միջամտության նվազեցում,

պետական ընկերությունների համար կատարվող ծախսերի կրճատման միջոցով պետական բյուջեի օժանդակում, ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացում: Երկրորդական խնդիրներ. պետականին այլընտրանքային և, հատկապես, բաժնետիրական սեփականության ընդլայնում, կապիտալի շուկաների ձևավորում և զարգացում, տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա բյուրոկրատիայի ազդեցության նվազեցում, բյուջեի եկամուտների ավելացում:

Թվարկվածներից բացի կարող են սահմանվել նաև այլ խնդիրներ, ելնելով տվյալ երկրին առանձնահատուկ բազմաթիվ պայմաններից:

Ակնհայտ է, որ վերջին հաշվով, մասնավորեցման նպատակների և խնդիրների իրագործումը ծառայում է շուկայական տնտեսության շարժիչ ուժերի, սեփականության տարբեր ձևերի, մրցակցության, շուկայական հարաբերությունների զարգացմամբ շահագրգռված մարդկանց՝ սեփականատերերի, ստեղծմանը և նրանց գործունեության ծավալմանը: Այսինքն, շուկայական տնտեսության և նրան բնորոշ հարաբերությունների համակարգը

**«Ձանգվածային սեփականաշնորհումն անխուսափելի ճախադրյալ է «անցումային» տնտեսական միջավայրը շուկայականի ձևափոխելու գործում:»**

ամբողջովին խարսխվում է ոչ թե մեկ, այլ տարբեր ձևերի սեփականության վրա: Այլ կերպ ասած, մասնավորեցման միջոցով երկիրը հասնում է այն բանին, որ յուրաքանչյուր ընկերության համար, անկախ դրա արտադրության չափերից

և ծավալներից երևան գա իսկական սեփականատեր: Սոցիալիստական երկրների անցած փորձը ցույց տվեց, որ համատարած կամ գրեթե համատարած պետական սեփականության պայմաններում դա մնաց որպես չլուծվող խնդիր: Գաղտնիք չէ նաև այն, որ պետական ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը զգալիորեն զիջում էր մասնավոր ձեռնարկությունների արդյունավետությանը և վերջին հաշվով ստացվում էր, որ երկրի մասշտաբով, ազգային եկամտի միավորի արտադրության համար սոցիալիստական երկրներում օգտագործվում էին նյութական, աշխատանքային և ֆինանսական ավելի շատ ռեսուրսներ. քան կապիտալիստական երկրներում: Եվ, թերևս, պետական ձեռնարկությունների աշխատանքի ավելի պակաս արդյունավետությունը հանգեցրեց ամբողջ սոցիալիստական համակարգի քայքայմանը:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ այդպիսի տնտեսությանը բնորոշ հարաբերությունները կարող են առաջանալ և զարգանալ այնտեղ, որտեղ տնտեսավարող սուբյեկտների միջև հնարավորին չափ ազատ են արտադրության արդյունքների փոխանակման հնարավորությունները:

Իսկ ինչպես ցույց է տվել փորձը, ավելի արդյունավետ և, որ ամենակարևորն է, «արդարացի» է արտադրության, բաշխման և փոխանակման այն ձևը, երբ արտադրության միջոցների նկատմամբ սեփականության իրավունքը, աշխատանքի կազմակերպումը և կառավարումը համատեղված են մեկ տնտեսավարող սուբյեկտի մեջ, դա լինի անհատ, թե կոլեկտիվ: Մասնավորեցման արդյունքում ստեղծվում է իրական տնտեսական կապ աշխատողի (սեփականատիրոջ) և նրա կողմից թողարկած արդյունքների միջև, որն իր հերթին հանգեցնում է աշխատանքի արդյունավետության բարձրացման, խրախուսում ձեռներեցությունը և ձեռնարկատիրական գործունեությունը, ինչի հետևանքով ներքին շուկան «հարստանում է» ապրանքներով և ծառայություններով: Այսինքն, մասնավորեցման միջոցով «հայտնաբերվում է» արտադրության (աշխատանքի, ծառայությունների) զարգացման այն շարժիչ ուժը, որով յուրաքանչյուր աշխատողի շահագրգռվածության օգտագործումը իր սեփական աշխատանքի արդյունքների նկատմամբ հասնում է բնականոն վիճակի, երբ աշխատողն ամեն ինչ անում է



բարձր արտադրողական, ստեղծարար աշխատանք և նախաձեռնություններ հանդես բերելու համար:

Պետական գույքի մասնավորեցումը Հայաստանում մինչև օրս իրականացվել է և այժմ էլ իրականացվում է Ազգային ժողովի կողմից ընդունված մասնավորեցման ծրագրերին համապատասխան: Մասնավորեցման առաջին ծրագիրը ՀՀ գերագույն խորհրդի կողմից հաստատվեց 1994թ. հունվարի 12-ին: Մասնավորեցման գործընթացը շարունակվեց 1996-1997 թվականների մասնավորեցման ծրագրին համապատասխան, որն ընդունվեց 1996թ. մարտի 20-ին:

Մասնավորեցման առաջին փուլում ընդգրկված ձեռնարկությունների ընտրությունը կատարվել է մի շարք սկզբունքներով, որոնցից հիմնականներն են. 1. արտադրության շահութաբեր լինելը և կապիտալի պտույտի արագությունը, 2. այդ ձեռնարկություններում առանց խոշոր կապիտալ ներդրումների տնտեսական զգալի արդյունավետության ապահովման հնարավորությունը, 3. նշված օբյեկտներն ունեն իրենց նմանատիպերը տնտեսության ոչ պետական հատվածում և դրանց մասնավորեցումը կնպաստի մրցակցության զարգացմանը, 4. թողարկվող արտադրանքը անմիջականորեն կողմնորոշված է դեպի սպառողական շուկա և այդ ձեռնարկությունների մասնավորեցումը կնպաստի շուկայի հագեցմանը, գների մակարդակի կայունացմանը, և, հետևապես, շուկայի լարվածության թուլացմանը, 5. նշված ոլորտների ձեռնարկությունները պատկանում են աշխատատար արտադրությունների թվին և թողարկվող արտադրանքի ծավալի ավելացման դեպքում նոր աշխատատեղեր կստեղծվեն:

*«Կարելի է ասել, որ հանրապետությունում ձևավորվել է սեփականատերերի խավ, որը կայուն տնտեսության առաջին գրավականն է:»*

Ներկա փուլում, երբ մասնավորեցման արդյունքում ձևավորվել է մասնավոր հատվածի «կրիտիկական» զանգված և այդ ոլորտում բարեփոխումները դարձել են անշրջելի, կարևորվում է մասնավորեցման հետևանքով պետական բյուջեի եկամուտների ավելացումը, աշխատատեղերի ստեղծումը և ներդրումների ապահովումը: Նման մոտեցումն էլ պայմանավորեց զանգվածային մասնավորեցումից անցումը դեպի ծրագրային մասնավորեցման: Այդ պատճառով էլ դեռևս 1997 թվականի վերջին փոխվեց մասնավորեցման հայեցակարգը, որն իր արտացոլումը գտավ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքում:

Ինչպես անցումային տնտեսության մի շարք երկրներում, մեզանում նույնպես մասնավորեցումից արագ (2-3 տարում) էՖեկտ սպասելու էլֆորիան այժմ իր տեղը գիջել է պրագմատիկ տեսակետին, երբ հասարակությունը ցանկանում է մասնավորեցվող գույքից «կենդանի» փողեր ստանալ: Ակնհայտ է, որ արդյունավետ սեփականատերերի վերջնական ձևավորումը կարող է տևել 8-10 տարի, ինչը բավականին երկար ժամանակ է մասնավորեցման արդյունքները տեսնելու առումով: Իսկ շատ երկրներ ակնկալում են զգալի դրամական մուտքեր ապահովել մասնավորեցվող գույքի վաճառքից: Այս տեսանկյունից ավելի ընդունելի է այն մոտեցումը, երբ մասնավորեցման տարբեր մեթոդների (սերտիֆիկատային և փողային) զուգակցման պայմաններում փողային տարբերակն աստիճանաբար դարձվում է զերակշռող: Այս զաղափարախոսությունն ամրագրվեց մասնավորեցման ներկա քաղաքականության համար: 1998 թվականին զանգվածային մասնավորեցման մոդելից անցում կատարվեց մասնավորեցման նոր քաղաքականությանը, որը թույլ է տալիս մասնավորեցվող ընկերություններում առավելագույնս ներդրումներ ներգրավել և ընկերությունները վաճառել ռազմավարական ներդրողներին՝ գործարար ծրագրերին համապատասխան: Դա է վկայում նաև ներկա փուլում մրցույթների ավելի լայն կիրառումը, երբ մրցույթի հաղթողը պարտավորություններ է ստանձնում ինչ-

պես ընկերության կենսունակությունն ապահովելու համար ներդրումներ կատարելու, այնպես էլ աշխատողներին սոցիալական երաշխիքներ տրամադրելու ուղղությամբ՝ աշխատատեղերի պահպանում և ավելացում, աշխատավարձերի բարձրացում և այլն:

1998 թվականի ընթացքում մասնավորեցման գործընթացը հանրապետությունում իրականացվեց «ՀՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Ծրագրում ամրագրվել են հետևյալ հիմնական նպատակները. տնտեսության մասնավորեցման աստիճանի բարձրացումը, ընկերությունների (ձեռնարկությունների) գործունեության արդյունավետության բարձրացումը, հիմնականում ավարտել պետական գույքի մասնավորեցման գործընթացը, պետական գույքի մասնավորեցման մեթոդների ընդլայնումը, այդ թվում՝ մրցույթների ավելի լայն կիրառումը՝ առավելագույնս խրախուսելով ներդրումները և ընկերությունների (ձեռնարկությունների) վաճառքը ռազմավարական ներդրողներին, պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին պետական բյուջեի եկամուտների ավելացումը:

1998 թվականը նշված մասնավորեցման ծրագրի իրականացման առաջին տարին էր և լայնածավալ աշխատանքներ

պահանջվեցին ապահովելու համար ծրագրի իրականացումը՝ փոփոխված պայմաններում և նոր ընդունված «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակներում: Նշենք, որ մասնավորեցման մասին նոր օրենքով զգալիորեն ընդլայնվել են մասնավորեցման օբյեկտները, մասնավորեցման ձևերը և գույքի գնահատման մեթոդները, ինչպես նաև մասնավորեցվող գույքի ձեռքբերման համար օգտագործվող միջոցները: Այսպես, օրինակ, մասնավորեցման առարկա է դարձել ոչ միայն պետությանը պատկանող գույքը, այլ նաև գույքային իրավունքները և ոչ նյութական օբյեկտները՝ նոր բաժնետոմսերի բաժանորդագրման իրավունքը, ընդերքի և բնական պաշարների օգտագործման իրավունքը: Նոր բաժնետոմսերի և փոխարկելի պարտատոմսերի թողարկմամբ մասնավորեցման ժամանակ հնարավորություն է տրվել ստացված միջոցներն ուղղել ոչ միայն պետական բյուջե, այլ նաև մասնավորեցվող ընկերությունների հաշվին: Նշված մեխանիզմի կիրառումը հնարավորություն կտա ապահովելու դրամական միջոցների մուտքն ընկերություն և կնպաստի ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կաշխուժացնի արժեթղթերի շուկան:

Մասնավորեցման մասին օրենսդրությունը հնարավորություն է ստեղծում անցում կատարելու զանգվածային մասնավորեցումից անհատականացվածին, սակայն մինչև օրս լուրջ ուշադրություն չի դարձվել անցյալում թույլ տրված այնպիսի բացթողման վերացմանն, ինչպիսին է մասնավորեցվող գույքի նախապատրաստական աշխատանքների ոչ բավարար աստիճանը:

Մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների էությունը կայանում է նրանում, որ նախքան գույքի վաճառքը կատարվում է խորացված ուսումնասիրություն և վերլուծություն՝ ընկերության ֆինանսա-տնտեսական վիճակի ուսումնասիրությունից մինչև իրական ներդրողի հայտնաբերումը: Անհրաժեշտ է որոշել ամեն մի ընկերության նկատմամբ եղած ներդրումային հետաքրքրությունների շրջանակը, ընկերության ֆինանսական վիճակը և հեռանկարներն, անհրաժեշտության դեպքում ներգրավելով անկախ աուդիտորական կազմակերպություններ:

Կարևոր խնդիր է վաճառվելիք բաժնետոմսերի փաթեթի չափի և դրա գնորդի որոշումը: Հարցը կայանում է



հետևյալում. 1. վաճառել բաժնետոմսերի ամբողջ փաթեթը, թե դրա մի մասը, 2. այն վաճառել մեկ, թե մի քանի անձանց, խոշոր, թե մանր ներդրողներին, 3. ինչ ձևով վաճառել բաժնետոմսերը:

Մասնավորեցման արդյունավետ գործարքների կնքման տեսանկյունից անհրաժեշտ է մասնավորեցման ենթակա գույքը պայմանականորեն բաժանել երկու հիմնական խմբերի. ընկերություններ, որոնք ենթակա են մասնավորեցման առանց երկարատև նախապատրաստման և ընկերություններ, որոնց նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ մոտեցում (ֆինանսական առողջացում, վերակազմավորում, կառուցվածքային փոփոխություններ, պարտքերի վերակառուցում և այլն) և որոնք ենթակա են մասնավորեցման ոչ մոտ ապագայում՝ նախապատրաստական բոլոր միջոցառումները ավարտելուց հետո:

Մասնավորեցմանը խոչընդոտող հիմնահարցերի շարքին պետք է դասել մասնավորեցվող ընկերությունների ունեցած պարտքերը և դրանց կառավարման գործուն մեխանիզմների բացակայությունը:

Հաշվի առնելով մասնավորեցման նոր օրենքի ընդունման հետ կապված մասնավորեցման ձևերի բազմազանությունը, անհրաժեշտ է զգալի տեղ հատկացնել մասնավորեցման սուբյեկտների կողմից կատարվելիք ներդրումներին (այն պետք է դիտվի որպես ձեռնարկություններում ֆինանսական «ներարկումներ») հիմնական աղբյուր): Պետք է մեխանիզմներ մշակվեն մասնավորեցման պայմանագրային (այդ թվում ներդրումային) պարտավորությունների վերահսկման համար:

Հաշվի առնելով, որ հետագայում մասնավորեցումը ստանալու է ներդրումների առավելագույն ներգրավման բնույթ, անհրաժեշտ է իրավական և կազմակերպական հիմք ստեղծել մրցույթների, նոր բաժնետոմսերի և փոխարկելի պարտատոմսերի թողարկմամբ, ընկերության բաժնետոմսերը մասնագիտացված շուկաներում վաճառքի, մասնավորեցման ձևերի ընդլայնման համար և մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ շեշտադրումն առավելագույն չափով դնել այս ձևերի վրա:

Մասնավորեցման ներկա փուլի առանձնահատկություններից պետք է նշել նաև այն, որ պետական գույքի ձեռքբերման համար նախկինում բաշխված սեփականաշնորհման սերտիֆիկատների գործողության ժամկետն ա-

վարուվեց 1998 թվականի դեկտեմբերի 31-ին, և այժմ մասնավորեցումն իրականացվում է միայն դրամով:

Նախորդ տարիների համեմատ կտրուկ աճել են մասնավորեցումից ստացված միջոցները՝ փողով: Այսպես, եթե 1997 թվականին մասնավորեցված պետական գույքի դիմաց վճարվել է 50,4 մլն. դրամ (կամ 1997թ. ընթացքում կատարված վճարումների 0,3%-ը), ապա 1998 թվականի ընթացքում մասնավորեցումից դրամական մուտքերը կազմել են 43836,6 մլն. դրամ (կամ 1998թ. ընթացքում կատարված վճարումների 90,2%-ը):

Մասնավորեցման արդյունքում տնտեսությունում ավելացել է մասնավոր սեփականության վրա հիմնված ընկերությունների թիվը: Կարելի է ասել, որ հանրապետությունում ձևավորվել է սեփականատերերի խավ, որը կայուն տնտեսության առաջին գրավականն է: Մասնավորեցման արդյունքում սեփականատերեր են դարձել ավելի քան 300 հազար քաղաքացիներ: Այժմ նոր սեփականատերերի առջև իրենց սեփականության արդյունավետ օգտագործման խնդիր է կանգնած: Նույն խնդիրը կա նաև պետական սեփականության արդյունավետ օգտագործման հարցում:

Պետական գույքի կառավարման հիմնախնդիրները լուծում են պահանջում ոչ միայն մեր, այլ նաև անցումային տնտեսություն ունեցող մյուս երկրներում: Գույքի որևէ մասի պետական մնալու պատճառներն առանձին երկրներում տարբեր են և հիմնականում պայմանավորված են մենաշնորհի տնտեսավարող սուբյեկտների գերիշխող դիրքը շուկայում կարգավորելու և հատկապես, բնական մենաշնորհի հանդիսացող գործունեության ոլորտներում բնակչության լայն խավերի շահերը պաշտպանելու նկատառումներով: Պետական է մնում նաև մասնավորեցման առաջարկված, սակայն գնորդ չգտած գույքը:

Պետական մնացող սեփականության կառավարման հիմնական խնդիրներից մեկն այն է, թե դրա համար պետական կառավարման մեկ մարմին, թե մարմինների (հիմնականում ճյուղային նախարարություններ) համակարգ է անհրաժեշտ: Ճիշտ է, թեև պետական գույք կառավարման ինչպես կենտրոնացված, այնպես էլ ապակենտրոնացված ձևերն ունեն լավ և վատ կողմեր, սակայն մյուս երկրների փորձը վկայում է, որ առավել տարածված և արդյունավետ է պետական գույքի կառավարման կենտրոնացված (մեկ մարմնի կողմից) ձևը, առավել ևս Հայաստանի նման փոքր երկրում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

*-Ասվում է, որ ներդրումների համար Հայաստանում առկա է նպաստավոր օրենսդրական դաշտ: Սակայն ի՞նչ իմաստ ունի այդ օրենքների ստեղծումը, եթե դրանք իրականության մեջ չեն գործում, դրանով իսկ խրտնեցնելով օտարերկրյա ներդրողներին:*

-Համաձայն չեն այդ մոտեցման հետ: Մեր օրենսդրությամբ ներդրողները զգալի խրախուսվում են: Հայաստանում լուրջ ներդրումների դեպքում գործում է հարկերից ազատման մեխանիզմ: Եթե կան օրինախախտումների կոնկրետ օրինակներ, լավ կլինեն նշվելին, այդ դեպքում խոսակցությունն ավելի առարկայական կլիներ:

Ինչ վերաբերում է մաքսային, հարկային, ձեռնարկությունների գրանցման հետ կապված քաշքշուկներին, ապա, ըստ իս, վերջին տարիներին համեմատաբար բարելավվել է վիճակն, այս ուղղությամբ կառավարությունը լուրջ աշխատանք է տանում: Մասնավորապես, եթե մի ժամանակ ձեռնարկությունների գրանցման ժամկետները 45 օր էր, ապա հիմա կա կառավարության հրահանգ, որով գրանցման համար տրվում է մինչև տասը օր: Մաքսային ծառայություն-

ների հետ կապված բարդությունները պայմանավորված են օրենսդրական դաշտի կանոնակարգման հետ, որը ներկայումս իրականացվում է: Կարծում են, մինչև այս տարվա վերջը մաքսային օրենսդրությունը բավականին կկարգավորվի:

*-Ինչու՞ չի կատարվում բորսայի միջոցով ձեռնարկությունների սեփականաշնորհման մասին կառավարության որոշումը:*

-Ճիշտ հարցադրում է: Թերևս, այստեղ մեղավոր է նաև սեփականաշնորհման նախարարությունը: Խնդիրն այն է, որ պետք է այդ ընկերությունները վերաձևակերպվեն պետական փակ բաժնետիրական ընկերությունների, քանի որ դրանք դեռևս գտնվում են ձեռնարկության կարգավիճակում: Այստեղ նաև բյուրոկրատիան է աշխատում սեփականաշնորհման, արդյունաբերության և առևտրի նախարարությունների, ինչպես նաև պետական ռեզիստրի մեջ: Շուտով հարցը կկարգավորվի, այդ ձեռնարկությունները կվերակազմակերպվեն: Բորսայով վաճառքի համար ընտրված է երեք ոչ վատ, լիկվիդային ձեռնարկություն, որպեսզի այս հարցում հաջողության հասնենք: Ինքս



շատ են կարևորում ֆոնդային բորսաների միջոցով սեփականաշնորհումը:

-Կառավարությունը որոշել է «Հայկական ավիաուղիների» սեփականաշնորհման ժամկետն ու պայմանները:

-Որպես համապատասխան հանձնաժողովի նախապատրաստող նախագահ, հստակ կարող եմ ասել, որ այդ ամենը դեռ որոշված չէ: Մենք դիմել էինք մի կազմակերպության, որն աուդիտ է կատարել ու ներկայացրել առաջարկություններ: Վերջիններս մենք լավագույնը չհամարեցինք: Հիմա այդ ուսումնասիրությունները կատարում է «Արթուր Անդերսեն» ընկերությունը, որը բավականին հայտնի է: Նպատակը ոչ միայն սեփականաշնորհումն է, այլ «Հայկական ավիաուղիների» ընդհանուր առողջացումը: Դեռ կորոշենք, թե տվյալ պարագայում որքանով է նպատակահարմար սեփականաշնորհումը: Արդեն մշել եմ, որ կան ձեռնարկություններ, որոնք պետք է առողջացման փուլն անցնելուց հետո միայն սեփականաշնորհվեն:

-Սեփականաշնորհման ընթացքում ի՞նչ սկզբունքներով են որոշվում ռազմավարական ներդրողները:

-Մենք նոր ենք սկսել այդ գործընթացը: Ռազմավարական ներդրողներին կարելի է ընտրել ուղղակի վաճառքի ձևով կամ մրցույթի միջոցով: Մեր տեսակետն այն է, որ պետք է նախօրոք տալ պայմանները, գտնել ներդրողներին, որից հետո հայտարարել մրցույթ: Կան դեպքեր նաև ուղղակի վաճառքի ձևով: Վերջերս Ազգային ժողովի քննարկմանն էր դրվել քիմիական գործարանների վաճառքի հարցը: Այս

դեպքում կա մոսկովյան կոնկրետ ձեռնարկություն, որը ցանկություն է հայտնել գնել նշված գործարանները, բայց որոշակի պայմաններով: Այդ իսկ պատճառով հարցը մտավ Ազգային ժողով:

-Այս տարի առաջին անգամ մասնավորեցումը կատարվում է առանց սերտիֆիկատի: Արդյոք դա չի՞ բերել գործընթացի դանդաղեցման:

-Գործընթացն, իրոք, դանդաղել է, սակայն այլ պատճառով: 1995-98թթ. ընթացքում չի վաճառվել շուրջ 300 ձեռնարկություն: Այս տարի փորձում ենք այդ ձեռնարկությունները կրկին վաճառքի դնել: Արդեն դրանց 30%-ը վաճառվել է, ինչը հաջողություն է համարում: Նոր ձեռնարկություններ առայժմ չեն դրվել վաճառքի և դանդաղեցման հիմնական պատճառը դա է: Այս տարվա երեք ամսվա ընթացքում պետական բյուջե մուտք է եղել մոտ 2,5 մլն դոլար:

-Ե՞րբ կհասունանա սեփականաշնորհման նախարարության լուծարումը:

-Որքան շուտ՝ այնքան լավ: Հույս ունեն, որ մոտ մեկ տարի անց արդեն կարիք չի լինի նման կառույց պահել: Որքան սեփականաշնորհման նախարարն ու նախարարությունը լավ աշխատեն, այնքան շուտ այս մի բյուրոկրատական ապարատը կվերանա:

## ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ

ՀՀ կենտրոնական ընտրական  
հանձնաժողովի նախկին նախագահ,  
կառավարման դպրոցի տնօրեն

**ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՉՅԱՆԸ**

ներկայացնում է

« ՀՀ ընտրական համակարգը »

Մայիսի 13-ին, ժամը 18:00-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի  
մեծ դահլիճում

Մուտքն ազատ է



**ԲԱՆԱԽՈՍ**

«Դասախոսությունների շարք» ծրագրի  
տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան  
Հատուկ դասընթացների բաժին

URL:// [www.aua.am/aua/extens/lectures](http://www.aua.am/aua/extens/lectures)

Ծրագրի համակարգող՝  
Հրայր Չոբյան

Հայաստանի ամերիկյան համալսարան  
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40  
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝